ԱՆՈՒՇ ԹԱՍԱԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի հայցորդ
Եղիշե Չարենցի տուն-թանգարանի գլխավոր ֆոնդապահ
anush.tasalyan@gmail.com

«ՍՏԱՆԴԱՐՏ» ԱՄՍԱԳՐԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՀՈԿՏԵՄԲԵՐ - ՆՈՅԵՄԲԵՐ» ՏԱՐԵԳԻՐՔ

Բանալի բառեր և արտահայտություններ. «Ստանդարտ» ամսագիր, «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրք, Պետհրատ, գրականություն, արվեստ, ճարտարապետություն:

Ключевые слова и выражения: ежемесячник "Стандарт", ежегодник "Октябрь-ноябрь", "Государственный вестник", литература, искусство, архитектура.

Key words and expressions: "Standard" monthly, "October-November" yearbook, State Gazette, literature, art, architecture.

Նախաբան

Ի՞նչ ճակատագիր ունեցավ «Ստանդարտ» ամսագիրը հրատարակվելուց հետո: «Չարենցը տխուր վերադարձավ ու հայտնեց մեր անելիքների մասին: Հենց նույն երեկոյան, հուլիսի 1-ին, վառեցինք մեր հանրակացարանի խոհանոցի մեծ պլիտան ու կրակին տվինք այնքան սիրով գլուխ բերած մեր «Ստանդարտը»: Մեկական օրինակ պահեցինք մեզ մոտ հիշատակի համար... Ահա թե ինչպիսի վախճան ունեցավ մեր «Ստանդարտը»»[1]: Տպագրված ամսագրի տարածման ձախողումը խոչընդոտ չի հանդիսանում Եղիշե Չարենցի հետագա հրատարակումների համար: Ավելին, բանաստեղծը շարունակում է հրատարակչական աշխատանքները, որովհետև ամսագրի ոչնչացումը բովանդակությանը չէր վերաբերում, այլև համարձակությանը՝ քննադատելու ժամանակի մամուլն ու իրակա-նությունն ընդհանրապես: Ամսագրից ձախողումից հետո էլ բանաստեղծը բուռն հրատարակչական գործունեություն է ծավալում, որի ակներև արդյունքը «Հոկտեմբեր - Նոյեմբեր» տարեգիրքն է:

Տպագրված ամսագրի հետագա ճակատագրի ձախողումը խոչընդոտ չի հանդիսանում Եղիշե Չարենցի հետագա հրատարակումների համար: Արտասահմանյան ուղևորության ընթացքում, Փարիզից Դերենիկ

[1] «Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին», Երևան, 1961թ, էջ 69:

Դեմիրճյանին գրված նամակի բլանկը հաստատում է, որ բանաստեղծը դեռևս մտորում է նոր պարբերական ստեղծելու վերաբերյալ: «Բացի պաշտոնական դիմումս՝ գրում եմ և մասնավոր ձևով: Փարիզում հրատարակվող թերթը և մանավանդ ժուռնալը պետք է այն վայրը լինեն, ուր հանդիպելու են իրար Հայաստանի և արտասահմանի... գրողները ....»[2]:

Գուրգեն Մահարին հիշում է. «Նամակ Փարիզից...«Ղեկ» անունով ամսագիր եմ հրատարակելու այստեղ... նյութեր ուղարկիր...»[3]: Հայտնի է, որ Եղիշե Չարենցի վերադարձից հետո երկար ժամանակով Փարիզ գործուղվեց Եղիա Չուբարը, որտեղ էլ 1925թ. հոկտեմբերից հրատարակվեց «Երևան» լրագիրը: Վստահ կարող ենք ասել, որ «Երևան» լրագրի հրատարակման նախապատրաստական աշխատանքներն արդեն իրականացրել էր Եղիշե Չարենցը:

Բովանդակություն

1932 թվականին Երևանում, Հ. Ս. Խ. Հ. Պետհրատի տպարանում հինգ հարյուր օրինակ լյուքս և երկու հազար հինգ հարյուր օրինակ սովորական թղթի վրա «գլավրիտ N 7935, հրատարակություն N 3022» տպագրվում է «Հոկտեմբեր - Նոյեմբեր» տարեգիրքը: Պատասխանատու խմբագիրը Եղիշե Չարենցն էր, տեխնիկական խմբագիրները՝ Եղիշե Չարենցը և Տաճատ Խաչվանքյանը: Բոլոր անվանաթերթերի, գծագիր պորտրեների, զարդանկարների, շապիկի և սուպեր- շապիկի նկարիչը՝ Հակոբ Կոջոյանը: Սրբագրական աշխատանքները կատարել են Սոս Հակոբյանը և Վահրամ Մանուկյանը: Տարեգիրքն սկսվում է Լենինի, Ստալինի, Հ. Կ. «Բ» Կ. Կենտկոմի քարտուղար Աղասի Խանջյանի լուսանկարներով և վերջինիս առաջաբանով՝ «XV հոկտեմբեր – XII նոյեմբեր»:

Ինչո՞ւ ստեղծվեց այս տարեգիրքը:

Ինչո՞ւ «XV հոկտեմբեր – XII նոյեմբեր»:

Ի՞նչ նմանություն կա ‹‹Ստանդարտը›› ամսագրի և «Հոկտեմբեր - Նոյեմբեր» տարեգրքի միջև:

Ինչո՞ւ շարունակություն չունեցավ տարեգիրքը:

«Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրքը նվիրված էր հոկտեմբերյան հեղափոխության և տասնհինգերորդ և Հայաստանի խորհրդայնացման

---

[2] Նամակը գրված է «Ղեկ» պարբերաթերթի բլանկի վրա, որտեղ նշված է նաև բանաստեղծի ժամանակավոր հասցեն՝ Mons. S. Pirrumoff, Rue Grenille 79, Paris7 V,192 5, Փարիզ:

[3] Գ. Մահարի «Չարենց-Նամե հուշեր, հոդվածներ», Երևան, 2 012 թ., էջ 73:

տասներկուերորդ տարելիցին[4]: Այստեղից էլ գալիս է տարեգրքի և «XV հոկտեմբեր – XII նոյեմբեր» հոդվածի անվանումը: Տարեգրքի հրատարակության առթիվ Պետհրատը հանդես է գալիս հայտարարությամբ. «Այս տարվանից սկսված Պետհրատը յուրաքանչյուր տարի լույս ե ընծայելու տարեգիրք – Հայաստանի նվաճումներին – գրականության, արվեստի, կուլտուրական շինարարության և ժողովրդական տնտեսության ասպարիզում...»[5]: Տարեգիրքը, լինելով առաջինը, և զուգադիպելով XV հոկտեմբեր – XII նոյեմբեր ամյակներին, բնականաբար պիտի ընդգրկեր ոչ միայն 1932 թիվը, այլ Խորհրդային Հայաստանի ամբողջ փառահեղ ուղին՝ 1920 թվականից մինչ 1932 թվականը: Հետագա տարեգրքերը պետք է ընդգրկեին միայն տվյալ տարվա իրադարձությունները: Պետհրատի այս հայտարարությունը նման է «Ստանդարտի կուրս»-ին: Հիշենք, որ «Ստանդարտը» ժուրնալ էր գրականության, արվեստի, իսկ տարեգիրքը՝ գրականության, արվեստի, գիտության և ժողովրդական տնտեսության վերաբերյալ: Սա առաջին նմանությունն է, միայն թե տարեգիրքը ամսագրի ընդլայնված շարունակությունն է: Երկրորդ նմանությունը ամսագրի և տարեգրքի բաժինների մեջ է: «Ստանդարտ»-ն ուներ չորս բաժին, որոնցից «Տրիբունա»-ն համապատասխանում է ««Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգրքի հրատարակության առթիվ», «XV հոկտեմբեր – XII նոյեմբեր» հոդվածներին: «Գրականություն» բաժինը՝ «Մեր գրողները» «Գրական ժառանգություն», «Ժողովրդական լուսավորություն յեվ գիտություն» բաժիններին: «Նկարքանդակ ճարտարապետություն» բաժինը՝ «Գրականություն և արվեստ» բաժնի «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Թատրոն», «Պարարվեստ», «Կինո», «Ճարտարապետություն» ենթաբաժիններին: Տարեգրքում տեղ են գտել նաև «Առողջապահություն», «Ժողովրդական տնտեսություն», «Խրոնիկա», «Կարմիր բանակ», «Պիոներիա» բաժինները:

Եթե ամսագիրն արտացոլում է այն ժամանակը, որի ծնունդն է, ապա տարեգիրքը տասներկու տարվա աշխատանքային գործունեության հանրագիտարան է, որից տեղեկանում ենք Պետհրատի գրական-գեղարվեստական հրատարակություններին: Դրանք հրատարակչական աշխատանքների համար լավագույն տարիներ են եղել: Հրատարակվել են հայ և համաշխարհային դասական գործեր, բացահայտվել են նոր

[4] Հայաստանի Հանրապետության վարչապետ Սիմոն Վրացյանի վերջին կառավարության հրաժարականով նոյեմբերի 2 9-
ին Հայաստանը հռչակվեց Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն:
[5] «Հոկտեմբեր - Նոյեմբեր» տարեգիրք, էջ 2 :

անուններ, հայ ընթերցողի սեղանին է դրվել վրաց, Եվրոպական, ռուսական գրականության լավագույն նմուշներ, կատարվել են բազմաթիվ թարգմանություններ, ստեղծվել է «Էժանագին գրադարան» շարքը՝ աշակերտի և ուսանողի համար էժան մատենաշարը... Տեղեկանում ենք Երևանում և Հայաստանի այլ քաղաքներում երաժշտական ստուդիայի[6], պարարվեստի ստուդիայի, կինոյի, թատերական ներկայացումների, ճարտարապետների, ճարտարապետական մեզ արդեն հայտնի կոթողների, առողջարանների հիմնադրման ու կառուցման, հայտնի մարդկանց հոբելյանների[7] անդրադարձին: Ինչո՞ւ շարունակություն չունեցավ տարեգիրքը: Հաջորդ համարը պետք է լույս տեսներ հաջորդ՝ 1933 թվականին, մոտենում էր Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության դժվարին, վերջին փուլը: Այս է պատճառը, մեր խորին համոզմամբ, որ տարեգիրքը շարունակություն չունեցավ: Այս հանգամանքը ևս մոտեցնում է հեռու, բայց նման «Ստանդարտ» ամսագիրը «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգրքին: Երկու դեպքում էլ տուժում է հայ ընթերցողը:

Եզրակացություն

Հոդվածի նպատակն է վերանայել ‹‹Ստանդարտ›› ամսագրի տեղն ու դերը հայ գրականագիտության մեջ: Հիշեցնել, որ ամսագրի ձախողումով չեն ավարտվել Եղիշե Չարենցի հրատարակչական աշխատանքները: Բանաստեղծ հրատարակիչն իրեն դրսևորել է տարբեր հրատարակչական աշխատանքներում, իսկ ‹‹Ստանդարտ››-ի գաղափարը սաղմնային վիճակում պահպանվել է մինչ 1932 թվականը, ընդլայնվել, զարգացել ու վերածվել «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգրքի: Ամսագրի և տարեգրքի ընդհանրությունները շատ են: Ամսագիրը տարեգրքի համառոտ տեսակն է, որի բաժիններն իրենց ենթավերնագրերով ավելի ընդլայնվել են տարեգրքում, որովհետև, թեպետ իր տեսակի մեջ առաջինն է, սակայն «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգիրքը տասներկու տարվա աշխատանքային գործունեության նկարագիր է, ամփոփում, արվեստի և արհեստի բոլոր ճյուղերի հանրագիտարան, որից տեղեկանում ենք Խորհրդային Հայաստանում ձևավորված արվեստի, գրականության, ճարտարա-պետության, շինարարության, կինոյի, պարարվեստի, առողջապահության և այլ ոլորտների ստեղծումն ու հետագա զարգացումը: Ինչպես նշվում է

[6] 192 1թ. Երևանում բացվեց երաժշտական ստուդիա, որը, 192 3-2 4 ուս. տարում, Լուսժողկոմատի հատուկ հրահանգով վերածվեց Պետական Կոնսերվատորիայի:

[7] 1930 թվականին Կոմիտասի ծննդյան 60-ամյակի կապակցությամբ տեղի ունեցավ հանդիսավոր նիստ և համերգ, լույս տեսավ Ռուբեն Թերլեմեզյանի «Կոմիտաս» գրքույկը:

Տարեգրքի հետագա համարներն արդեն պետք է հրատարակվեին յուրաքանչյուր տարին մեկ անգամ, և ընդգրկեին մեկ տարվա աշխատանքային ամփոփ տեղեկատվություն: Հաջորդ համարը պետք է լույս տեսներ հաջորդ՝ 1933 թվականին, մոտենում էր Եղիշե Չարենցի կյանքի և ստեղծագործության դժվարին, վերջին փուլը: Այս է պատճառը, մեր խորին համոզմամբ, որ տարեգիրքը շարունակություն չունեցավ: Այս առումով ևս նման են ամսագիրն ու տարեգիրքը: Անկախ նրանց բովանդակային կարևորությունից, հետագա համարներ չունեցան և իրենց տեսակով մնացին միակը: Այս հանգամանքը ևս մոտեցնում է հեռու, բայց նման «Ստանդարտ» ամսագիրը «Հոկտեմբեր-Նոյեմբեր» տարեգրքին:

Ануш Тасалян

Продолжение ежемесячника "Стандарт": ежегодник "Октябрь - ноябрь"

Резюме

Цель статьи – рассмотреть место и роль ежемесячника «Стандарт» в армянском литературоведении. Напомнить, что издательская деятельность Егише Чаренца не закончилась с провалом ежемесячника. Поэт-издатель проявлял себя в различных издательских работах, а идея «Стандарта» сохранялась в зачаточном состоянии до 1932 года, расширялась, развивалась и превратилась в ежегодник «Октябрь-ноябрь». Ежемесячник и ежегодник имеют много общего. Ежемесячник - это сокращенный тип ежегодника, разделы которого дополнительно расширены в ежегоднике своими подзаголовками, поскольку, хотя и первый в своем роде, ежегодник «Октябрь-ноябрь» представляет собой отчет о двенадцатилетней работе, сводку, энциклопедию всех отраслей искусства и ремесел, из которой мы узнаем о создании и дальнейшем развитии искусства, литературы, архитектуры, строительства, кино, танца, здравоохранения и других областей, сформированных в Советской Армении. Как уже упоминалось, последующие выпуски «Ежегодника» уже должны были публиковаться раз в год и включать сводную информацию о работе за год. Следующий номер должен был выйти в 1933 году. Приближался трудный, последний этап жизни и творчества Егише Чаренца. Именно поэтому, по нашему глубокому убеждению, ежегодник не получил продолжения. В этом отношении ежемесячник и ежегодник тоже схожи. Независимо от важности их содержания, они не имели дальнейших номеров и остались единственными в своем роде. Это обстоятельство и сближает далекий, но похожий "Стандарт" с ежегодником "Октябрь-ноябрь".

Anush Tasalyan

The continuation of "Standard" monthly: "October - november" yearbook

Summary

The purpose of the article is to review the place and role of "Standard" monthly in Armenian literary studies. To remind that the publishing works of Yeghishe Charents did not end with the failure of the monthly. The poet-publisher manifested himself in various publishing works, and the idea of "Standard" was kept in its embryonic state until 1932, expanded, developed and turned into the "October-November" yearbook. The monthly and the yearbook have a lot in common. The monthly is an abbreviated type of the yearbook, the sections of which are further expanded in the yearbook with their subheadings, because, although it is the first of its kind, the "October-November" yearbook is a record of twelve years' work, a summary, an encyclopedia of all branches of art and craft from which we are informed about the creation and further development of art, literature, architecture, construction, cinema, dance, healthcare and other fields formed in Soviet Armenia. As mentioned, the subsequent numbers of the yearbook were already must be published once a year including one year's work summary information.

The next number was to be published in 1933, the difficult, last phase of Yeghishe Charents' life and work was approaching. This is the reason, in our deep conviction, that the yearbook was not continued. In this sense, the monthly and the yearbook are also similar. Regardless of their content importance, they did not have further numbers and remained the only ones of their kind. This circumstance also brings the distant but similar "Standard" monthly closer to the "October-November" yearbook.

Խմբագրություն է ուղարկվել 15. 07. 2022թ
Հանձնարարվել է գրախոսության 30. 07. 2022թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ.